

**ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԼՈՍ ԱՆՃԵԼՐՍԻ ԳԼԽԱԽՈՐ ՏՆՕՐԷՆԸ
Կ'ԱՅՑԵԼԷ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ**

Յուլիս 6ին, 2010, Ամերիկեան Կարմիր Խաչի Մեծագոյն Լոս Անճելըսի Տնօրէն՝ Տիար Փոլ Շուլց այցելեց Առաջնորդարան եւ հանդիպում ունեցաւ Սրբազան Հօր եւ Ամերիկեան Կարմիր Խաչի Լոս Անճելըսի Վարչական Մարմնի Անդամ՝ Իրաւաբան Ժոզէֆ Կանիմանի հետ: Սոյն հանդիպման ընթացքին գլխաւոր նիւթներն էին Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Օծումը եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնաբեր այցելութիւնը Արեւմտեան Թեմ եւ յարաբերութեանց զօրացումը Ամերիկեան Կարմիր Խաչի Լոս Անճելըսի Բաժանմունքի եւ Արեւմտեան Թեմի միջեւ:

Որպէս Ատենապետը Նորին Սրբութեան այցելութեան Վարիչ Յանձնախումբի, Պրն. Կանիմեան հրաւիրեց Պրն. Շուլցը, որպէսզի ներկայ գտնուի Մայր Եկեղեցւոյ օծման արարողութեան: Միասնաբար շրջագայեցան նորակառոյց Մայր Եկեղեցւոյ Համալիրէն ներս: Անոնք նոյնպէս խորհրդակցեցան նուիրահաւաք կատարելու ի նպաստ Կարմիր Խաչին:

Պատուարժան հիւրը լաւագոյն տպաւորութիւններով բաժնուեցաւ Առաջնորդարանէն՝ շնորհաւորելով Սրբազան Հայրն ու Պրն. Կանիմեանը, մաղթելով նորանոր յաջողութիւններ: Հոս կ'ուզենք յիշել նաեւ, որ Պրն. Կանիմեան անդամ է Ամերիկեան Կարմիր Խաչի Մեծագոյն Լոս Անճելըսի հանգանակիչ-տնտեսական ընդարձակումին: